Նապաստակի երգը

Խոսք՝ *Ս. Մուրադյանի*
Երաժշտ.՝ *Է. Միհրանյանի*

Կանաչ-կանաչ բացատում
Վազվզում եմ, թռչկոտում,
Ուտում գազար ու տերև,
Կրծում արմատներ:
Իմն է անտառը սիրուն,
Իմն են բացատն ու առուն,
Ծաղիկները բուրավետ,
Սար ու հովիտ, արահետ:
Նապաստակն եմ ես սիրունիկ,
Մորթիս շատ փափուկ է ու ձյունիկ:
Երբ որ ես քուն եմ մտնում,
Աչքերս բաց են մնում,
Որ որսորդին շուտ տեսնեմ,
Զարթնեմ ու արագ փախչեմ:
Իսկ երբ ձմեռն է իջնում,
Ես արջի պես չեմ ննջում.
Թափառում եմ շարունակ,
Անցնում դաշտ-ձորակ:

Ճամփաներով ձյունապատ
Ես անցնում եմ յոթ բացատ,
Բանջարանոց եմ մտնում
Ու համեղ կեր եմ գտնում:

Նապաստակն եմ ես սիրունիկ,
Մորթիս շատ փափուկ է ու ձյունիկ: